

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ողորմեցե՛ք ձեզի, ո՛վ քրիստոնեաներ, եւ մի՛ մնաք մեղքի մէջ: Մեղաւորը նման է հիւանդի, որ եթէ ծածկէ իր ցաւը եւ չխոստովանի բժիշկին, հիւանդութեան դեղ չի գտներ: Նոյնպէս քահանան, հոգիներու բժիշկ է: Ան, որ ծածկէ իր մեղքերը եւ չխոստովանիր, յաւիտեան կան մահով կը մեռնի:

Մեղանչողը այնքան առեւտրային է, որ ողջ է սատանային բերանը կը գտնուի: Երբ խոստովանի մեղքը, կը փրկուի անոր բերանէն, իսկ եթէ մեղքով մեռնի, կը մտնէ սատանային փորը՝ որ դժոխքն է: Մարդ, երբ մեղք կը գործէ եւ չխոստովանիր, մահ եւ կորուստ կը պատճառէ հոգիին, ինչպէս օձին եւ կարիճին խայթոցը պատիկ է, բայց դառն կսկիծ եւ մահ կը պատճառէ:

Արդ, խոստովանեցե՛ք, որովհետեւ ատիկա է մեղանչողներուն դեղն ու բժրշկութիւնը: Ան, որ չխոստովանի եւ մեղքով մեռնի, յետ մահու ոչ մէկ հնար եւ փրկութեան յոյս կայ: Այնքան ժամանակ, որ մարմնով կ'ապրիմք այս աշխարհին մէջ, հոս է մեղանչողներուն փրկութեան յոյսը: Ոմանք կը վախճան, մի գուցէ քահանան կը հրապարակէ իրենց խոստովանութիւնը: Աստը համար Ս. Ներսէս կանոն դրած է, որ «Քահանան եթէ ապաշխարողի մը խոստովանութեան ու ապաշխարանքի խօսքեր յայտնէ, նզովուի եւ կարգալոյծ ըլլայ» (Կանոն ԺԹ):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ

ՃԱՇՈՑ ԿԱՍ ՃԱՇՈՒ ԳԻՐՔ



Ճաշոց գիրքը ոչ միայն մեզի կը ներկայացնէ մարգարէական ընթերցումները, իմաստութեան գիրքերը, առաքելական թուղթերը, աւետարանական հատուածները, ոչ միայն եկեղեցական մեծ դէմքերու հոգեւոր ապրումներուն եւ ջատագովականներուն գանձարանն է անիկա, այլ նաեւ՝ իր մէջ կը խտացնէ եկեղեցւոյ ամբողջական տօնացոյցը, սաղմոսներու, շարականներու եւ բացառիկ ծիսակատարութեանց կիրարկման արձանագրութիւնները, յար եւ նման Տօնացոյցին:

Յառաջիկայ թիւին մէջ պիտի ներկայացնենք ամէն կիրակի սուրբ պատարագէն ետք բաժնուող ՄԱՍԻՆ իմաստը:

â

ՇՆՈՐԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ԲՈՒ ԽՍՐԷՂ ԽՄ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 2 ՅՈՒՆԻԱՐ 2022

ԹԻՒ 1

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 51.15-52: Եբր. 13.18-25: Ղուկ. 22.24-30

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 22.24-30

Աշակերտներուն մէջ վեճ ծագեցաւ, թէ իրենցմէ ո՞վ պիտի նկատուի մեծը: Յիսուս անոնց ըսաւ. «Ազգերու թագաւորներ կը տիրեն իրենց ժողովուրդներուն վրայ եւ իշխողները բարերար կը կոչուին իրենց հպատակներուն կողմէ: Բայց ձեր պարագային, այդպէս պէտք չէ ըլլայ: Ընդհակառակը, ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ եւ առաջնորդը՝ սպասատրին պէս: Ո՞վ է մեծը: Մեղան նստողը, թէ՞ սպասատրը: Անշո՛ւշտ, որ սեղան նստողը: Բայց ես ձեր մէջ սպասատրի պէս եմ: Դուք միշտ քովս մնացիք փորձութիւններու ընթացքին եւ ես ահա կը խոստանամ թագաւորութիւն տալ ձեզի, ինչպէս՝ Հայրս ինձի տալ խոստացաւ: Իմ սեղանէս պիտի ուտէք եւ խմէք՝ իմ թագաւորութեանս մէջ եւ պիտի բազմիք գահերու վրայ՝ դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը»:

Ի Ս Կ Ա Կ Ա Ն Մ Ե Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ճշմարիտ մեծ մարդը ա՛ն է, որ կ'ապրի աստուածահաճոյ կեանք մը առանց սակայն յաւականութիւնը ունենալու ինքզինք մեծ նկատելու: Զրիստոնէայ մարդը իր մեծութիւնը պէտք չէ տեսնէ իր ունեցած դիրքին, աթոռին կամ դրամին մէջ, այլ՝ իր ապրած հաւատքի կեանքին եւ իր նմաներուն մատուցած իր ծառայութիւններուն մէջ: Մարդ արարածը ա՛յնքանով մեծ է՝ որքանով աստուածասէր եւ մարդասէր է: Երբե՛ք մեծ պէտք չէ կոչել այն մարդը, որ չ'ապրիր հաւատքի կեանք մը: Բնա՛ւ մեծ պէտք չէ նկատել այն մարդը, որ ոչնչութիւն կը սեպէ իր նմանները եւ անոնց վրայ իշխել կը փորձէ: Մե՛ծ կոչուիլ ուզող իր աշակերտներուն Զրիստոս փոքրիկի մը օրինակը տուաւ, որպէսզի սորվեցնէ անոնց եւ մեզի, որ մեծնալու ճամբան փոքրանալ ընդունիլն է: Դուն կ'ընդունի՞ս փոքրանալ:

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Հայաստանեայց եկեղեցւոյ տօնա-
ցոյցին համաձայն, Բարսեղ Հայրապետի
տօնը կը գուգադիպի կիրակի, 2 Յուն-
ւար 2022-ին: Ուստի, եկե՛ք միասնաբար
ծանօթանալ Հայրապետին:

Բարսեղ Հայրապետ ծնած է 330-ին՝
Կեսարիա: Եղած է քրիստոնեայ պատ-
ւական ընտանիքի զաւակ: Ուսանած է
Կեսարիա, ապա՝ Պոլիս: Բարձրագոյն
ուսումը ստանալէ յետոյ, կը վերադառ-
նայ Կեսարիա եւ ինքզինք կը նուիրէ վա-
նական կեանքին: Որոշ ժամանակ այ-
ցելելէ ետք Սուրիոյ եւ Եգիպտոսի վա-
նական շրջանակները եւ Ս. Երկրի սրբ-
բավայրերը, վերջնականապէս կը հաս-
տատուի Նէօ-Կեսարիա՝ Նիսիսի շրջա-
կայքը իբրեւ մենակեաց՝ 358-ին: Սար-
կաւագ կը ձեռնադրուի: Նագիանգացի
Գրիգորի հետ կը նուիրուի առաքելական
փարոզութեան Պոնտոսի եւ Կապա-
դովկիայի գաւառներուն մէջ: Ընդառա-
ջելով իր ֆաղափ եպիսկոպոս Եւսեբիոսի
կոչին, 364-ին կը ձգէ իր նգնարանը
պայքարելու համար Արիոսականութեան
դէմ՝ իբրեւ օգնական մետրոպոլիտին:

370-ին, երբ Եւսեբիոսը կը վախ-
ճանի, Բարսեղը կը յաջորդէ անոր՝ իբ-
րեւ Կեսարիոյ արքեպիսկոպոս եւ ար-
դիւնաւոր մեծ գործունէութիւն ցոյց կու
տայ: Շատ պայքարներ կ'ունենայ հերե-
տիկոսներու դէմ: Ան բացառիկ կազմա-
կերպական յատկութեամբ օժտուած,
պերճախօս փարոզիչ, հմուտ հոգեւորա-
կան էր:

Բացի վանքերէն, հաստատած է
բազմաթիւ բարեգործական հաստա-
տութիւններ՝ աղփատներու եւ հի-
ւանդներու համար, դպրոցներ եւ
որբանոցներ՝ մանուկներու համար:

Իր մատենագրական գործերէն՝
նշանաւոր են իր գրած Ս. Պատարագը,
որմէ շատ տարրեր ունի նաեւ մեր Պա-
տարագը, «ՎԵՑՕՐԷՔԸ», որ ստեղծա-
գործութեան վեց օրերու մասին բա-
ցատրական ինը փառք են: Այս երկու
գործերը, ինչպէս նաեւ՝ իր բոլոր գոր-
ծերը թարգմանուած են հայերէնի,
սկսեալ՝ Ոսկեդարէն, շուրջ 60 կտորներ:
Ծանօթ են իր մեծ աղօթքները, որոնցմէ
ումանք մինչեւ օրս կը կարդացուին մեր
եկեղեցւոյ մէջ՝ մեծ տօներու ընթացքին:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՄԵԱՆ

**ՍՄԲՂԻԿ ԻՆՉ ՉԵՒՈՎ ԱՍՏՈՒԾՈՅ
ՉՄԱԿ ԿՐ ԳԱՌՆԱՆ**

Մարդիկ երեք ձեւով Աստուծոյ գա-
ւակ կը դառնան.

- 1.- ՀԱԻԱՏՔՈՎ. «Իսկ զինք ընդունող-
ներուն եւ իրեն հաւատացողներուն իշ-
խանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ
ըլլալու» (Յե. 1.12 Հմմտ. Գղ. 3.26):
- 2.- ՈՐԴԵԳՐՈՒԹԵԱՄԲ. «Ո՛չ միայն
ստեղծագործութիւնը, այլ՝ մեմք եւս, որ
Սուրբ Հոգին ստացած ենք իբրեւ
Աստուծոյ պարգեւներուն երախայրի-
քը, ներքնապէս կը հեծենք՝ ակրնդէտ
սպասելով որդեգրութեան, այսինքն՝
մեր մարմինին փրկութեան» (Հո. 8.23):
- 3.- ՍԻՐՈՎ. «Տեսէ՛ք, թէ ինչպիսի՛ սիրով
հայրը մեզ սիրեց ուզելով, որ Աստու-
ծոյ որդիներ կոչուինք եւ արդարեւ
Աստուծոյ որդիներն ենք» (Ա. Յե. 3.1):

**Հ ՈԳԵՒՈՐ
ՊԱՏ ԳԱՍ**

ԻՍԿՎԱԾ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Դարձեալ Նոր Տարուան մը
սեմին ենք: Եւ հարց կու տամ, թէ
ի՞նչն է որ տարին կ'ընէ «նոր»:
Իսկական Նոր Տարին կը սկսի միայն
այն ատեն, երբ Աստուած շնորհէ
մեզի «նոր սիրտ» ու «նոր հոգի» (Եզ.
36.26): Չկայ Նոր Տարի առանց
սրտի ու հոգիի նորոգութեան: Չկայ
Նոր Տարի առանց Քրիստոսով նոր
մարդ դառնալու որոշումին: «Եղէք
նոր մարդ» կը յանձնարարէ Աս-
տուծոյ մարդը՝ Պօղոս (Եփ. 4.24):
Նոր Տարին կը դառնայ նոր, երբ թոյլ
տանք, որ Աստուծոյ Հոգին «նոր իւ-
ղով» օժէ մեզ (Սղ. 92.10): Իւղով մը՝ որ
իրեն հետ պիտի բերէ աստուծային
օրհնութիւններ: Սիրելի՛ եղբայր եւ
քոյր, քեզ կը հրաւիրեմ, որ Նոր
Տարին դիմաւորես նոր որոշումով մը:
Այդ որոշումը Քրիստոսի դառնալու եւ
Քրիստոսի վատահելու որոշումն է:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
Եթէ վարժութիւն դարձնենք մնա-
լուն կերպով Աստուծաշունչ կարդա-
լը, ի վիճակի կ'ըլլանք հասնելու մեր
փրկութեան, կը ճանչնանք թէ՛ ուղիղ
դաւանութիւնը եւ թէ՛ առաքինի վարքը.
նոյնիսկ եթէ մէկը ըլլայ խիստ յամառ,
խստապարանոց եւ ծոյլ, եւ նոյնիսկ
եթէ անցեալին ոչ մէկ օգուտ քաղած է
Աստուծաշունչի ընթերցումէն, կու
գայ ժամանակ սակայն, երբ կը սկսի
պտուղ տալ, եթէ յարատեւ ընթերց-
ման մէջ:
(Յովհան Ոսկեբերան)

ՏՕՆԱՍՈՐ

Ամանորը կամ Նոր Տարին
հայերը կոչեր են նաեւ Կաղանդ: Այս
բառէն կու գայ Կաղանդչէքը, որ կը
նշանակէ Կաղանդի առթիւ տրուած
նուէր: Կաղանդչէքի հասկացողութիւնը
կուգայ թերեւս Եդեմական պարտէզէն:
Իբրեւ նոր դարաշրջանի սկիզբ, մեր նա-
խահայրը ամէն ինչ, որպէս նուէր ստա-
ցաւ. թէ՛ կեանքը, թէ՛ միտքը, թէ՛ ըն-
տանիքը: Եդեմական պարտէզին մէջ ծառ
մը կար՝ Կենաց (կեանքի) ծառը, որը վաղ
թէ ուշ պիտի ճաշակէր Ադամը: Բայց ան
նախընտրեց ուրիշ ծառ՝ իմաստութեան
ծառը: Այդ ընտրութիւնով ալ, կենաց
ծառը դարձաւ ամենամատչելի եւ երա-
նելի բաղձանք՝ մարդկութեան համար:
Մարդկութիւնը բոլոր ժամանակներուն
մէջ երագեր է այդ ծառին մասին: Ամա-
նորի տօնածառը մէկ փոքրիկ յուշ է այն
նուիրական ծառին, որ կորսնցուց
մարդկութիւնը: Այս պատճառով է, որ
քրիստոնեայ երկիրներու մէջ այս ծառը
կոչուեր է նաեւ Ծննդեան ծառ: Ծննդեան
օրերուն, երբ նոր տարի մը կը բացուի
մեր առջեւ, մեմք ցանկութիւնը կ'ու-
նենանք նորէն վերագտնել այդ կրտսած
ծառը՝ կենաց ծառը: Խորհրդաւորաբար
ծննդեան ծառը կապուեր է կենդանի
կենաց ծառին՝ Յիսուս Քրիստոսի հետ:
Այսինքն՝ Եդեմական պարտէզի կենաց
ծառը Ամանորի տօներուն նոյնն է
ծննդեան կենդանի ծառին՝ Յիսուս Քրիս-
տոսի հետ: Ինչպէս մոզքերը իրենց ըն-
ծաները բերին Մանուկին առջեւ, այդպէս
ալ՝ մեմք կը ձգտինք մեր ընծաները բերել
Կենդանի ծառին՝ զարդարելով տօնա-
ծառը: